ԼԱՈՒՐԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐՈՂ ՏԻՐԱՆ ՉՐԱՔՅԱՆԻ (ԻՆՏՐԱ) ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Հոդվածում ներկայացվում է բանասիրական գիտությունների դոկտոր Պետրոս Դեմիրճյանի նոր աշխատությունը՝ նվիրված արևմտահայ գրող Տիրան Չրաքյանի (Ինտրա) ստեղծագործությանը:

Ուսումնասիրությունը դիտարկվում է որպես առաջին ամբողջական հետազոտություն գիտական կենսագրության ժանրով՝ ներառելով ժամանակի հասարակական-գրական համապատկերը: Աշխատությունն արժևորվում է հաճախ ոչ հայտնի, հարուստ փաստական նյութերի, ինչպես նաև առաջադրվող տեսական խնդիրների քննությամբ:

Բանալի բառեր՝ *արևմտահայ գրականություն, գիտական կենսագրություն, «Ներաշխարհ», «Նոճաստան», խորհրդապաշտություն, ազգային մտածողություն:*

Մեր գրականության արևմտահայ հատվածի շուրջ հետաքրքրությունը վերջին տասնամյակներում նոր վերելք է ապրում՝ գրավելով ուսումնասիրողներին հետազոտության նոր ոլորտների հայտնաբերմամբ: Կարելի է ասել, որ գրականագիտության մեջ հաստատված որոշակի ավանդույթը նախանշում է հետագա ուսումնասիրությունների անհրաժեշտությունն ու հեռանկարային արգասավորությունը: Այդ իմաստով է հատկանշվում Պետրոս Դեմիրճյանի «Տիրան Չրաքյան (Ինտրա) կյանքը և գործը» ուսումնասիրությունը, որ լույս է տեսել ծավալուն գրքով 2016 թվականին[1]:

Տիրան Չրաքյան-Ինտրայի գործի ուսումնասիրման գրավչությունը մերօրյա հետազոտողի համար հասկանալի է մի շարք առումներով: Գրող-իմաստասերի՝ առեղծվածներով լեցուն կյանքն ու ստեղծագործությունը խնդրադրության լայն հնարավորություններ են ընձեռում՝ միաժամանակ ի հայտ բերելով գրողի արժեքայնության նոր որոնումների ցանկալի մատույցների ձգտումը: Առաջադրվող աշխատության դեպքում այս գործոններին միանում են անթաքույց մեծ սերը և մասնագիտական բացահայտումների համառ ջանքը, որոնք անպայմանորեն իրենց դերն են ունեցել թեմայի ընտրության հարցում: Կարծում ենք՝ այս գործոններն էական են, քանի որ Պետրոս Դեմիրճյանի գրականագիտական բազմաթիվ նախասիրություններում Ինտրա երևույթն արդեն տարիներ շարունակ հետևողական ու լուրջ քննության բնույթ է կրում: Հենց այդ իմաստով էլ ուշագրավ է համալրված գործառույթներով

[1] Պետրոս Դեմիրճյան, Տիրան Չրաքյան (Ինտրա). Կյանքն ու գործը, կամ՝ «Հեքիաթի իրականությունը», Եր. ՀԳՄ հրատ., 2016, 720 էջ:

հատկանշվող աշխատությունը, որ ներառում է դիտարկվող նյութի հետ կապված բազմապիսի հարցադրումներ՝դրանց գտնված պատասխաններով: Դրսևորվել է ուսումնասիրողի մոտեցման էական առանձնահատկությունը՝ բացահայտել ոչ միայն գեղարվեստական երևույթն իր խորքով, բացառիկությամբ, այլ նաև գեղագետի անհատականությունն ու ստեղծագործական իմացաբանական հիմքերը:

Ծավալուն ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, հինգ մասերից՝ժամանակագրությունից՝ իրենց 13 գլուխներով, ծանոթագրություններից, բառացանկից և օգտագործված գրականության ու հապավումների ցանկերից: Կառուցվածքային հնարավոր տարբերակներից ընտրելով ժամանակագրական՝ կյանքի և ստեղծագործության զուգորդվող քննության տեսակը, ուսումնասիրողը ներածության մեջ համառոտ ներկայացրել է հետազոտության նյութը, նպատակը, արդիական նշանակությունը, ինչպես նաև պատճառաբանված աղերսները համաշխարհային և հայ գրականության զուգահեռներում: Կարևորելով մտահղացման տրամաբանությամբ և նյութի յուրահատկությամբ պայմանավորված կառուցվածքի սահմանագծումը՝ պետք է նշել, որ գրքի հեղինակի մանրակրկիտ մտածված ամբողջական մոտեցումը թույլ է տվել ներթափանցել գրողի գեղարվեստական մտածողության շերտերը,բացահայտել նրա ինքնատիպ աշխարհի առանձնահատկությունները: Անշուշտ, յուրաքանչյուր հետազոտող ազատ է քննության ուղիների ընտրության մեջ, և հիմնականում համաձայնելով հեղինակի առաջարկած ներածության բնույթին, որտեղ առկա է նյութի մասնագիտական ընկալումը, կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ առավել հանգամանորեն ներկայացնել ներածության մեջ հարցի պատմությունը, ուր կդիտարկվեին նախորդ ուսումնասիրողների կարծիքներն ու տեսակետները: Բացի անհրաժեշտ գիտական տեղեկատվությունից, դրանով ստուգության կենթարկվեին հեղինակի հետագա քննության առաջադրույթները: Անարդար կլիներ չնշել՝ գլուխների շարադրանքի ընթացքում հեղինակը տարբեր առիթներով անդրադարձել է Ռեթեոս Պերպերյանի, Հակոբ Օշականի, ինչպես նաև մերօրյա հետազոտողներից Վազգեն Գաբրիելյանի, Ստեփան Թոփչյանի, Վլադիմիր Կիրակոսյանի, Գրիգոր Պըլտյանի և շատ այլ գրականագետների տեսակետներին, այսինքն իրապես կարևորում է դրանք՝ գրողի կյանքի և գործի ամբողջական ներկայացման համար: Սակայն այստեղ խոսքը վերաբերում է ժամանակների հոլովույթում գրողի գնահատման գրականագիտական լիարժեք պատկերին, որը ցանկալի կլիներ տեղադրված տեսնել հենց ներածության էջերում: Թվարկվել են անուններ, այնինչ, այդ ուսումնասիրողների գործի քննությունը պատմագործառութային հայեցակետից ցույց կտար տարբեր մոտեցումներով գրողի նշանակության բացահայտման շերտերը ժամանակների հոլովույթում:

Չրաքյան-Ինտրայի անձի և գործի հանդեպ հետաքրքրությունը, արժևորող կարծիքներն ի հայտ են եկել նրա գրական առաջին փորձերի հետ և շարունակվել ու խորացել գրականագիտական նշանակալի իրացումներով: Շուրջ մեկ և կես դար ձգվող այդ պատմությունը նաև յուրօրինակ անդրադարձն է այն տեղաշարժերի, որ ունեցել է

հայ քննադատական միտքը բարդ ու իրարամերժ տեսակետների հանգուցալուծումներում: Հանգուցային խնդիրները պայմանավորված են ոչ միայն ստեղծագործական ժառանգության ինքնատիպությամբ, այլև մեծ պատմական ընթացքում դրանց ընկալման և արժևորման փոփոխվող չափանիշներով: Հատկապես դա էլ ակնհայտ ցուցանում է Պետրոս Դեմիրճյանի համոզված մոտեցումը, քանի որ արդեն գրքի վերջում հեղինակն անհրաժեշտ է գտել տեղադրել «Վերջաբանի փոխարեն, գնահատության հետագա ընթացքը» բաժինը, որտեղ համալրված ներկայացվում են 20-ական թթ. մինչև մեր օրերը ձգվող ուսումնասիրությունները:

Աշխատության բոլոր գլուխները, բովանդակային ընդհանուր տրամաբանությամբ կապակցված, աստիճանաբար ընդլայնում են նյութի քննությունը՝ այնտեղ ներառելով գրողի ինքնության հայտանիշները՝ իրենց ուրույն արտահայտությամբ: Կարծում ենք, որ հաջողված և արդյունավետ է հետազոտողի կողմից բազմադիմի խնդրի քննության ընտրված սկզբունքը՝նկատի առնելով նյութի առավել ամբողջական մատուցման հիմնախնդիրը:

Աշխատության հինգ մասերում՝ իրենց ենթամասերով, մանրակրկիտ քննությամբ լրացվում, վավերագրվում է գրական, գեղագիտական , իմացաբանական խնդիրների այն տիրույթը, որտեղ ամրագրվում է Չրաքյանի գործի նշանակությունը՝ իր ստեղծագործական մտածողության յուրատեսակ արժեքայնությամբ: Արդեն առաջին գլխից՝ «Անհատականության ձևավորումը» վերնագրով, առկա է հմուտ գրականագետի նպատակաուղղված ջանքը՝ որոնելու և գտնելու գրողի ստեղծագործական առեղծվածի բանալին նրա մտածողության իմացաբանական ակունքներում՝ ծննդավայրի, ընտանիքի, ուսման գործոնների կարևոր առաջնահերթությամբ: Շարադրանքի հետագա ընթացքով դիտարկվում են Ինտրայի գրական նախափորձերը՝ մանրամասն վերլուծությամբ ներկայացնելով «Հրուանդան», «Լետին», «Աշնային թաղում» և մյուս բանաստեղծությունները՝ իբրև նախամուտք նրա կյանքի գլխավոր գործի՝ « Ներաշխարհի» հայտնության:

«Ներաշխարհի» ստեղծագործական պատմությունը, ներկայացված հանգամանալի քննությամբ, աշխատության հաջողված հատվածներից է՝ կարևորված անձի ինքնատիպ հոգեբանության, հեղինակի բնորոշմամբ՝ «տեսակացող անհատի» արարման բանաձևումներով, առանձնությունը գոյավորող սենյակի խորհրդանշական երևույթով, ինքնաճանաչման ձգտման արտահայտություններով: Վերլուծության ընթացքով ճշգրտվում է ստեղծագործության ժանրը՝ իբրև քնարափիլիսոփայական արձակ՝ նկատի ունենալով գրողի ուրույն հոգեբանի ձևառճական իմաստների և խոհազգացական կառույցի ըմբռնումը:

Ինչպես այս հարցի անդրադարձում, այնպես էլ գործի ուղղության, գեղարվեստական հայացքների, ստեղծագործական մեթոդի, միստիցիզմի առանձնահատկության և շատ այլ խնդիրների քննությունը Դեմիրճյանը միջարկում է ինչպես Ինտրային ժամանակակից, այնպես էլ հետագա՝ մինչև մեր օրերը հասնող կարծիքների ու տեսակետների զուգորդվող համապատկերում: Եվ այդ

համապատկերում «ներաշխարհը» և Ինտրային ընկալելու, ճանաչելու և ի վերջո արժևորելու ուղիներում գրականագետի դրույթների հաստատման հուսալի հենարան են դառնում հենց իր՝ Ինտրայի «ներաշխարհ»-ն իր հեղինակէն դիտուած» ինքնադատական հոդվածը, ինչպես նաև ավելի ուշ հրապարակված «Կարծիքներ և կարծողներ» վերլուծականը, Մ. Կյուրճյանին ուղղված նամակները, տարբեր առիթներով գրված գրախոսականները և այլ գրություններ: Այս առումով կարծում ենք արդարացված է ուսումնասիրողի մոտեցումը, երբ իր քննության մեջ առաջնորդվելով հենց գրողի հավատամքի փաստարկումներով, որոնք լիարժեքորեն բացահայտում են և «Ներաշխարհի» ուրույն ստեղծագործական հայեցության հիմքերը, հղացման նպատակը՝ հաստատում է նրա երկի փիլիսոփայական-էթիկական-հոգեբանական գործառույթների փոխներթափանցված դաշնությունը:

Իր իսկ՝ Ինտրայի բնորոշմամբ՝ «Ներաշխարհի» «երրեակ հատկանիշների»՝ բնութենապաշտի, կենսապաշտի ու բարոյապաշտի սկզբունքների երևույթն էր այդ դաշնությունը, ինչը դառնում է որոշակի գեղագիտություն, որի մեկնության խորքային շերտերում Դեմիրճյանը գտնում է աղերսներ ոչ միայն եվրոպական, այլև Արևելքի դարավոր պոեզիայի ու արձակի նախորդ փորձի ուղենշային երևույթների հետ: Ընդ որում, այդ աղերսների ընդգծումը չի հանգում ազդեցությունների բացահայտման: Դեմիրճյանը գտնում է շատ ավելի կարևոր՝ գեղարվեստական մտածողության տիպաբանական ընդհանրություններ՝ միաժամանակ հետևողականորեն շեշտելով Չրաքյան-Ինտրայի՝ ինքնության երևույթով բնորոշվող հայեցության ուրույն բնույթը: Ի վերջո, գրականագետի մեկնություններում գրողի՝ բնություն-կյանք-գոյի իմացաբանության և գեղագիտության առանցքն ի հայտ է գալիս ոչ միայն միջտեքստային հարաբերություններում, այլև տիեզերականի համաստվածային ընկալումից, որ ձգվում է որոշակի տեղանք-բնակավայրից՝ իբրև ներաշխարհային իրողություն:

Ինտրայի քնարական-գեղագիտական հայեցության դրսևորումների քննությունն ուսումնասիրության ըստ ամենայնի ուշագրավ մասերից է:

Հոդվածների, նամակների, բանավեճերի մանրամասն դիտարկումներում Դեմիրճյանն ի հայտ է բերում գրողի տեսադրույթներից բխող որոշարկված սկզբունքները, որոնք հստակեցվում և ձևավորում են դրանց համակարգված բնույթը: Սակայն ուսումնասիրողի՝ ամբողջության մեջ արդարացված միտումը՝ ներկայացնելու գրողի և մտածողի տեսակետների ճշմարտացիությունը, երբեմն վերածվում է անվերապահ հիացումի կամ կրքոտ հակադարձման, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է «Ներաշխարհի» տարամետ գնահատումներին: Նույնականանում են նույնիսկ այդ կարծիքները որակող արտահայտությունները՝ «միջակություններ, կանխակալ ու չարամիտ, անհեթեթ, սուտ ու սխալ» մեկնաբանություններ և այլն: Եթե Չրաքյանի պարագայում միանգամայն հասկանալի են զգացական վրդովմունքն ու հուզական բնորոշումները «քննադատցուների» հասցեին, ապա հետազոտող հեղինակի դեպքում տեղին կլիներ պահպանել պատմական-քննական հայացքի զուսպ, անխոտոր ընթացքը, ինչով բնութագրվում է ուսումնասիրությունն իր համատեքստի ամ-

բողջական բովանդակությամբ:

Չրաքյանի ստեղծագործական անհատականության արտասովոր, նաև բազմաբնույթ երևույթը լիարժեք նկարագիր է ստացել աշխատության հաջորդ գլուխներում՝ «Նոճաստանի», մանկավարժական հայացքների, հուշ-ուղեգրությունների հանգամանալի վերլուծություններում: Կուզենայինք առանձնացնել այդ արժեքավոր քննությունն այն իմաստով, որ աշխատության հեղինակի հետևողական ջանքով այստեղ ի ցույց են հանվում և հաստատվում Չրաքյանի խորապես ազգային, հասարակական պատկերացումները: Ինչպես իրավացիորեն նշում է Դեմիրճյանը, հատկապես «Աղօթք», «Տօրոսէն անցք» գործերում «դրսևորվել են գրողի ազգասիրությունն ու հայրենասիրությունը»՝ դրանով իսկ հերքելով ազգային կյանքին անհաղորդ մնալու մասին կարծիքները: Ուսումնասիրության վերջին՝ հինգերորդ մասում, հենվելով ժամանակակիցների՝ Վ. Թեքեյան, Ե. Օտյան, Նշան Պեշիկթաշլյան, Թեոդիկ և շատ ուրիշների հուշերի, տեղեկությունների վրա, հեղինակը վավերագրական ճշգրտությամբ վերականգնում, ամբողջացնում է Չրաքյանի կյանքի վերջին տարիների՝ 1919-1921 թ. պատմությունը՝ ձերբակալության, աքսորի և ի վերջո, եղերական մահվան դրվագներով:

Աշխատության հեղինակը, ձգտելով Չրաքյանի գործի ամբողջական, գիտական համակարգված հետազոտության հասունացած պահանջի իրագործմանը, պատշաճ արդյունքի է հասել առաջադրույթների նպատակաուղղված, բազմակողմանի քննությամբ: Ծավալուն շարադրանքում առկա է հեղինակի՝ հետազոտվող նյութին բազմակողմանի տիրապետումը: Դեմիրճյանի ուսումնասիրության գիտական նորույթը ոչ միայն աննախադեպ ամբողջացված նյութի անդրադարձն է, այլև գրողի կյանքի ու գործի պատմության իմաստային դաշտի լայնացումը, որտեղ կարևորվում են ոչ միայն նորահայտ փաստերը, այլև նոր մոտեցումները գրողի կենսապատումը, ստեղծագործական առնչությունների ներդաշնակությունն ու հակասությունները մեկնաբանելիս: Ընդհանրապես ողջ շարադրանքի էական արժանիքն է ամբողջական համակարգում հատկանշվող նոր փաստերի, ճշտումների առաջին անգամ շրջանառելու երևույթը: Կատարվել են բազմաթիվ բանասիրական ճշտումներ՝ կապված գրողի կյանքի և ստեղծագործության հետ, ճշգրտվել են գործերի ստեղծման, տպագրության տարեթվեր, ճշտվել են նաև հուշագիրների կողմից ներկայացված որոշ փաստեր, տարեթվեր, այդ թվում, որ կարևոր է, նաև Տիրան Չրաքյանի մահվան օրը՝ 1921 թ. հունիսի 6-ը:

Պետրոս Դեմիրճյանի ուսումնասիրության հետազոտական արգասավորությամբ մեկ անգամ ևս հիմնավորվում է արևմտահայ գրականության բացառիկ արժեքների նորովի, խորքային ճանաչման, բացահայտման պահանջը՝ ի նպաստ ազգային գրականության ամբողջական համապատկերի:

НОВОЕ ИССЛЕДОВАНИЕ О ЖИЗНИ И ТВОРЧЕСТВЕ ЗАПАДНО-АРМЯНСКОГО ПИСАТЕЛЯ ТИРАНА ЧРАКЯНА (ИНТРА) - ***ЛАУРА МУРАДЯН*** - *В статье представлена новая монография доктора фил. наук Петроса Демирчяна «Тиран Чракян (Интра), жизнь и творчество или реальность «сказки».*

Работа рассматривается как первое целостное исследование в жанре научной биографии, включая панораму общественно-литературной жизни Западной Армении, посвященное изучению жизни и творчества писателя Тирана Чракяна (Интра). Серьезными достоинствами книги являются богатые документальные, часто малоизвестные материалы, а также предлагаемые некоторые теоретические проблемы.

Ключевые слова: *западноармянская литература, научная биография, «Духовный мир», «Кипарисовая роща», символизм, национальное мышление.*

*NEW STUDY ON THE WORK OF WESTERN ARMENIAN WRITER TIRAN CHRAKYAN–***LAURA MURADYAN** - *The article presents the new monography " Tiran Chrakyan (Intra), life and work or reality of Tale" by Petros Demirchian, Doctor of Philological Science. The work is seen as the first holistic study in the genre of scientific biography, including the panorama of social- literature life of Western Armenia, devoted to the study of life and work of West-Armenian writer Intra (Tiran Chrakyan) . The serious dignity of the book is the rich documentary, often little known materials, and also some proposed theoretical problems.*

Key words: *Western Armenian literature, scientific biography, «Inner world», «Cypress Park», symbolism, national thinking.*